



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34(04)  
4 - 82

L 1 MAR 2010

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ  
ՑԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՊՐՈՊԼԵՍՏԸ

ՇՐԱԳՐԱՄԵՐՈԴԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

37(07)

4-89

ԳԵՂԱՐԱՍ 1931 ՅԵՐԵՎԱՆ

33631

37(07)

4-82

Կ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՆ  
ՊՐՈՖԼԵՄԸ

1/առ 2  
33635

ԴՐԱԳԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԲՅՈՒՅՈ

Մայիս 1931

Թարգմ. Գալք. Հակոբյան

ԳԵՂԱՐԱԾ

1931

ՑԱՐԱԿԱՆ

27 FEB 2014

44 776

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ  
(Մերոդական մշակում)

I ԹԽՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԱԿՐՈՒՄԸ

ԹԵՇՎՐԱՏԻ ՏԱՄԱՐԱՆ  
ԳԼՈՎԼԻՏ 6857 (F.)  
ՀՐԱՏ. № 1861  
ՊԱՏՎԵՐ 5162  
ՏԻՐԱԺ 2000

Թեմայի հիմնական նպատակն ե՝ կուլտուրական հեղափոխության մասին լենինյան ուսմունքի և XV ու XVI կուսամազադումարների համապատասխան վորոշումների հիման վրա—կուլտուրական շինարարության գործի այն հիմնական խնդիրները, վորոնք տվյալ ետապում ամբողջ ճակատով սոցիալիստական ծավալուն հարձակում գործելու պայմաններում ծառացած են կուսակցության առաջ՝ հանուն ԽՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ընթացիկ տարրում ավարտելու պայքարի պայմաններում։

Ընթերցողների ուշադրության մորիլիզացիան այս խնդիրների չարչը, —վորոնք հաջողությամբ կազող են լուծվել միայն կուսակցության գլխա-

Վոր գծից շեղվելու դեմ յերկու ճակատի վրա՝  
կուլտուրայի ու դասակարգային թշնամու և նրա  
գաղափարական ագենտուրայի դեմ հետագա  
հարձակում գործելու ճակատում՝ անխնա պայքար  
մղելու հիման վրա, —պետք ե ապահովի ընթեր-  
ցողների մասնակցությունը կուլտուրական հե-  
ղափոխության խնդիրներն անմիջականորեն իրա-  
կանացնելու գործին:

Թեմայի մշակումը զուգադիպում ե անցկաց-  
վող («Լեպսե»-ի անվան գործարանի բանվորնե-  
րի նախաձեռնությամբ —տես «Եղվեստիա», 1931  
11 մայիսի)՝ 1931 թ. կուլտուրանի իրակա-  
նացման համար պայքարելու հարվածային  
միաժամակին: Ամեն մի զպրոց, ամեն մի  
խմբակ մասնակից դարձնելով —մշակման հետե-  
լանքով—միաժամակի հաջողությունների հա-  
մար մղվող պայքարին՝ անհրաժեշտ ե սրանով իսկ  
սկիզբ դնել ընթերցողների հետազա սխանմատիկ  
մասնակցությանը, կուլտուրական հեղափոխու-  
թյան մարտական խնդիրների լուծման գործին:

Կոմունիստը կուլտուրանակային ե, կուլտես-  
տափետի աղղարարը, կուլտարշավի կազմակեր-  
պիչը, հանուն նոր զպրոցի պայքարողը, կուլ-  
տուրական շարժման առաջավորը—ահավասիկ  
այն գործնական արդյունքները, վոր պետք ե

Ճեղք բերվեն տվյալ թեման դպրոցներում և խըմ-  
բակներում մշակելու հետևանքով:

## II. ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆԸ

1. Կուլտուրական հեղափոխությունը ժաղո-  
վրդական տնտեսության սոցիալիստական վերա-  
կառուցան կարևոր պրոբլեմներից մեկն է:

2. Դասակարգային պայքարը կուլտուրական  
հակառում:

3. Պայքար յերկու ճակատի վրա՝ կուլտու-  
րական շինարարության ասպարիզում:

4. «Յերեսներս դեպի տեխնիկա» լգունքը:

5. Կուլտուրական շինարարության գլխավոր  
բնագավառները:

ա) Պայքար կադրերի համար. բ) ընդհանուր  
պարտադիր ուսուցում և դպրոցի պոլիտեխնիկա-  
ցիա. գ) անգրագիտության վերացում:

6. Մասամերին կուլտուրական նակատի  
հիմնական խնդիրների շուրջը գորակոչելու ձևերը  
(կուլտարշավ, կուլտեստափետ)

7. Միասնական կուլտծրագիր:

III ԹԵՄԱՅԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՑԵՎ  
ՀԱՆԴՈՒՅՅԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԽ-  
ԹՅՈՒՆ

1. Կուլտուրական հեղափոխությունը ժողովրդական տնտեսության սոցիալստական վերակառուցման կարևորագույն պրոբլեմներից մեկն է:

Այս բաժինը մշակելիս, ամենից առաջ պետք է ընդգծել, վոր կուլտուրական հեղափոխության ծավալումը ժողովրդական տնտեսության սոցիալստական վերակառուցման խնդիրները հաջող կերպով լուծելու կարևորագույն պայմաններից մեկն է: Սոցիալստական շինարարության չըստնված տեմպերը, յերկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ժեծագույն տեղաշարժերը, մասսաների քաղաքական ակտիվության հսկայական աճումը — այս բոլորը պահանջում են աշխատավայրական լայն մասսաների կույայական կուլտուրական վերելք:

Այսուհետեւ պետք է կանդ առնել կուլտուրական շինարարության հարցերի նկատմամբ կուսակցության XV XVI համադումարների հիմնական գրույթների վրա, վոր նախատեսում են միավայր մասսաների մորիլիզացիա՝ կուլտուրային տիրապետելու և կուլտուրական շինարարու-

թյունը բայլշելիյան տեմպերով ծավալելու համար: Կուսակցության XVI համադումարն իր վրոշումների մեջ նշում ե, վոր «յերկրի կուլտուրական շինարարության ծավալման տեմպերը գեռամենեւին ել բավարար չեն» (բանաձեռ՝ ԿԿ հաշվետվության առթիվ), վոր այս տեմպերը զեռևս հետ են մնում սոցիալիստական շինարարության տեմպերից և պահանջեց ուժեղացնել այդ տեմպերը: Այսպիսով՝ կուլտուրական հակառի հարձակումը պրոլետարիատի սոցիալստական վողջ հարձակման անկապտելի մասն է դառնեամ:

Այսուհետեւ պետք է մատնանշել, վոր կուլտուրական հեղափոխության ծավալումը հանդիսանում է Վ. Ի. Լենինի համապատասխան ցուցումների ու պատգամների անմիջական կատարումը:

1922 թ. Լենինը գրում ե՝ «գլխավորը, վոր մեզ պակսում ե՝ կուլտուրականությունն ե, կառավարելու ընդունակությունը: Նեպը մեզ համար տնտեսապես ու քաղաքականապես միանգամայն ապահովում ե մեր սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման հնարավորությունը: Բանը «միայն» պրոլետարիատի և իր ավանդարդի կուլտուրական ուժերն են, («Լենինյան ժողովածու», VIII, եջ 68): Ինքնըստիւցյան պարզ ե, վեր-

լենինյան այս արտահայտությունը հատուկ ակտուալ նշանակություն ե ստանում այժմ, յերբ մենք ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը:

Կուլտուրական հեղափոխության պլոտլեմը լենինի կողմից հաճախ ե ընդգծվել: Այդ մասին նա գրել ե նաև իր վերջին՝ «կոռպերացիայի ժամանք» հոդվածում:

«Մեզնում քաղաքական ու սոցիալական հեղաշրջումը, — գրում ե լենինը. — նախորդող հանդիսացավ այն կուլտուրական հեղաշրջմանը, այն կուլտուրական հեղափոխությանը, վորին դեմ առ դեմ մենք այսոք այնուամենայնիվ կանգնած ենք: Յեվ շարունակում ե — «մեզ համար այժմ բավական ե այդ կուլտուրական հեղափոխությունը, վոր դառնանք միանդամայն սոցիալիստական յերկիր (Յերկերի ժողովածու, Հատոր XVIII, մաս 2, էջ 134—135):

Այս բաժինը մշակելիս, անհրաժեշտ ե ոգտագործել մեր կուլտուրական հետամնացության փաստերը (մեքենաների փչացումն Ստալինը դորձարանում, տվյալ ձեռնարկության խորհանակառության և կալտնաեռության մի շարք փառեր. դորժալքում, հարբեցողություն), վորոնք արգելակում են մեր զարգացման արագ տեմպերը:

## 2. ԴԱՍԱԿԱՐԳՎԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒԼՏՈՒՐԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Պարզաբանելով, վոր կուլտուրական ճակատում պլոտլետարիատի հարձակումը հանդիպում է դասակարգային թշնամու կատաղի դիմադրությանը՝ պրոպագանդիստը պետք ե մերկացնի այս դիմադրության զանազան ձևերը: Պետք ե մատնանշել, վոր կուլտուրական ճակատում դասակարգային թշնամին հատուկ ճկունություն ու ճարպիկություն ե ցուցաբերում, ամեն կերպ ձգտելով արդելակել կուլտուրական հեղափոխությունը:

Պրոպագանդիստն առանձնապես պետք ե շեշտի կուլտուրական ճակատում դասակարգային թշնամու ցույց տված դիմադրության հետեւյալ ձևերը.

ա) Վճառաբարությունը գիտության բնագավառում. սոցիալիստական շինարարությանը թշնամի տեսության տարածումը, գիտական ուսումնասիրության փոխանակումը կեղծ գիտական նյութերով, վորոնց նպատակն ե այս կամ այն բնագավառում Խորհրդային իշխանությանը վնաս հասցնել: Իբրև որինակ՝ կարելի յերել՝ տեխնիկական պրոբլեմների «մշակումը» Ռամզինի և «արդյունաբերության կուսակցության» մյուս անդամների կողմից, աղբարային պրօբլեմներինը:

կոնդրասայելի, Զայանովի և այլոց կողմից, ուշնու-  
տեսական պլութեմներինը՝ Գրոմանի, Սուխանո-  
վի, Բաղարովի, Ֆին-Յենոտայլսկու, Ռուբինի և  
այլոց կողմից.

բ) Վեասարարությունը կադրեր պատրաստե-  
լու բնագավառում, վոր արտահայտվում է ԲՈՒՀ-  
երի և ԲՏՈՒՀ-ների վերակազմության գործը  
դանդաղեցնելու, ուսանողների արտադրական  
պրակտիկան, դասավանդման մեթոդները և այլն  
ձախողելու ձգտումով.

գ) յեկեղեցականների հակահեղափոխական  
ակտիվության աճումը, վորոնք փորձում են խան-  
դարել կուլտուրական հեղափոխության զարգա-  
ցումը.

դ) կուլակային հակահեղափոխական ադիտա-  
ցիան՝ ընդդեմ ընդհանուր ուսուցման և անզրա-  
գիտության վերացման.

ե) կուլակների փորձը՝ ձախողելու կուլտու-  
րական աշխատանքի նյութական բազան (դպրոց-  
ների, խրճիթ-ընթերցարանների և այլ շենքերի  
հրդեհում) և մեր շարքերից խլելու կուլտուրական  
նակատի առաջարկներին (մահափորձ՝ Խորհ-  
րային իշխանությանը նվիրված՝ կուլտուրավի-  
կագմակերպիչների, լուժագույն խրճիթվարների,  
ռասուցիչների վրա).

զ) կուլակային հակահեղափոխական գաղա-  
փարների խցկումը գեղարվեստական գրականու-  
թյան մեջ (Պիլնյակ, Զամյատին):

Այս բաժնում ևս անհրաժեշտ է կանգ առնել  
ինտելիգենցիայի մեջ տեղի ունեցող և ուժեղացող  
գիֆերենցիացիայի վրա: Մի կողմից՝ մասսաների  
զաղլի մասը միանդամայն անցնում է պրոլետա-  
րիատի կողմը՝ մասնակից դառնալով նրա սոցիա-  
լիստական հարաւական գործին: Մյուս կողմից՝  
հին, հետադիմական բուրժուական ինտելիգեն-  
ցիայի մնացորդները, վոր առաջ հույս եյին գնուց  
խորհրդային սիստեմի «խաղաղ վերասերման»  
վրա, այժմ, հանձին: Հաջողությամբ ծավալվող  
սոցիալիստական շինարարության, դեպի հակա-  
հեղափոխական լազերն են գլորվում, «սոցիալա-  
կան բազա» հանդիսանալով վնասարար ուամզին-  
ների, կոնդրատյելների, Գրոմանովների և այլոց  
համար:

3. ՊԱՅՔԱՐ ՑԵՐԿՈՒ ՃԱԿԱԾԻ ՎՐԱ՝ ԿՈՒՀՏՈՒ-  
ՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐՁՈՒՄ

Տվյալ բաժնում պրոպագանդիստը պետք է  
պարզաբանի ունկնդիրներին, վոր կուլտուրական  
ճակատում կուսակցության գլխավոր գծեց կա-  
տարվող շեղումները նույն հրեթերով են ռեվում,

ինչով քաղաքականության ու տնտեսական շինա-  
րարության հարցերի մեջ ոպղրառության մարտական  
թերթիան ու պրակտիկան են սնվում, և «գասո-  
կարգերի պայքարի պայմաններում բուրժուազիա-  
յի ու բուրժուական դաղափարախոսության կող-  
մից պրոլետարիատի և իր կուսակցության վրա  
ճնշում գործ դնելու» արտահայտությունն են  
հանդիսանում (ՍՏԱԼԻՆ):

Այսուհետեւ պետք է մերկացնել կուլտուրա-  
կան ճակատում աջ և «ձախ» շեղումներ յերեան  
զալու ձեվերը:

Աջ ոպղրառունիստները կուլտուրական ճակա-  
տում դասակարգույին պայքարը չեն տեսնում,  
կուլտուրական հեղափոխության խնդիրներն ան-  
տեսում են, կուլտուրական շինարարության բայլ-  
շեիկյան տեմպերին դեմ են գուրս գալիս, «մանր  
քուրքուական լիբերալիզմ» են ցացարերում՝ ամ-  
լացնելով կուլտուրական աշխատանքի քաղաքա-  
կան բովանդակությունը, լոկ «կուլտուրականու-  
թյամբ» վոլխարինելով մասսաների սոցիալիստա-  
կան դաստիարակության մարտական աշխատան-  
քը: Ինչպես և տնտեսական շինարարության աս-  
պարիզում, աջերը կուլտուրայի ճակատում եւ  
ինքնահոսի տեսությունն ու պրակտիկան տարա-  
ծաղներն են հանդիսանում, չհասկանալով մասսա-

ների զեկավարումն ու նրանց կազմակերպումը՝  
կուլտուրական հեղափոխության մարտական խըն-  
դիրների շուրջը:

Կուլտուրական ճակատում ոպղրառունիզմի  
ամենացայտուն որինակը ՀԱՄԿԽ-ի նախկին  
ոպղրառունիստական զեկավարության կուլտուրա-  
կան «պլատֆորմ» եր : Արհմիությունների կուլտ-  
ապարատը վորպես պայքարի զենք ոգտագործելու  
փոխարեն, ընկ . Տոմսկին խորհուրդ եր տալիս  
հրաժարվել մասսաների քաղաքական դաստիարա-  
կությունից: —«Բանվորին դուք ամեն ինչ տեն-  
դենցներով, ուղղություններով եք տալիս, —  
ասում ե ընկ . Տոմսկին՝ արհմիությունների VI  
համագումարում: —Այս բանը բանվորին ձանձ-  
րացնում ե և նա ուղում ե վոր մի բան ել առանց  
ուղղության լինի» (արհմիությունների VI հա-  
մագումարի սղագիր հաշվետվություն, հրատա-  
րակություն ՀԱՄԿԽ-ի):

«Ձախ» ոպղրառունիզմը կուլտուրական ճակա-  
տում, ինչպես և մյուս ճակատներում «մանր  
քուրքուական ուաղիկալիզմով» եւ արտահայտ-  
վում: Մի կողմից՝ Տրոցկին ժխտում ե բանվոր  
դասակարգի կողմից անցողիկ շրջանում պրոլե-  
տարական կուլտուրա ստեղծելու հնարավորու-  
թյունը, ձգտելով պրոլետարիատի կապիտուլյա-

ցիային՝ բուրժուական կուլտուրայի առաջ, առաջարկելով մինիմալիստական խնդիրներ, ամբողջ գործը հասցնելով բուրժուալիստայի կուլտուրայից ինչ վոր մինիմում յուրացնելուն («Մեր դարաշվանը դեռևս նոր կուլտուրայի դարաշվան չի»· «Մեզնում որահանդիսաւ եւ Պիտի շապիկը լվանալ, մազերը խուզել ու սանրել եւ, առաջին հերթին, հետանը մաքրել և յուղել»: Ա. Տրոցկի, դրականություն և հեղափոխություն, եջ 145, հրատ. 2-րդ): Մյուս կողմից՝ Տրոցկիներն ու կուլտուրական ճակատի «Ճախ» խոտորոշները փորձում են ծայրահեղ «Ճախ», արժատական «դատարկախոսությամբ կուսակցությունը հեռացնել կուլտուրական հեղափոխության մարտական խընդիրների լուծումից: Այսպես, որինակ՝ «Ճախերը» դրոցի վերացման դաշտավար են առաջ քաշում, այն հիմնավորելով ամբողջ ուսուցումն անմիջականորեն արտադրություն փախադրելու անհրաժեշտության բարձրադրորդ դատարկախոսությամբ: Այս խոտորոշմերը ձեռնոտու յեն միայն կուլակությանն ու նրա դադարախոսներին, վորոնք շահագրգուված են ընդհանուր ուսուցման և դպրոցի պոլիտեխնիկացման ճախողումով: «Ճախ» խոտորոշմերի այսպիսի մի արտահայտություն էլ հակարտեկան հարցերում վորոշ աշխատա-

կիցների բռնած գիրքն եւ Նրանք պնդում են, թե՝ «մեր բանվորներն աստծուն չեն հավատում, եւ հակակրոնական աշխատանքը մեղ համար այնքան ել ակտուալ չի»: Թուրացնելով հակակրոնական ճակատը՝ «Ճախերը» դրանով իսկ ուժեղացնում են յեկեղեցականների ու կուլակության դիրքերը:

#### 4. «ՅԵՐԵՍՆԵՐՍ ԴԵՊԻ ՏԵԽՆԻԿԱ» ԼՈԶՈՒՆԳԸ

Այս բաժնին վերաբերող դրույցն անմիջապես կապված պետք ե լինի կուսակցության գլխավոր գծի համար կուլտուրայի ճակատում մղվող պայքարի հետ: Կուլտուրական շինարարության առարիգում «յերեսներու դեսի տեխնիկա» լողունու կը կյանքում կիրառելու ընդունակություն, այս վճռական ողակին կառչելու և ըստ այսօն կուլտաշխատանքի ամբողջ սիստեմը կառուցելու ընդունակություն—ահայասիկ այն փորձաքարը, վորով առաջին հերթին պիտի և առուգիլ այս կամ այն կուսկագմանակիքու բյան ունակությունը՝ պայքարելու կուլտուրական հակատաւ՝ կուսակցության գծի իրականացման համար:

Այս բաժնի «մշակման» հիմքը պետք ե դարձնել «տնտեսավարների խնդիրների մասին» ընկ. Ստալինի արտառանած ճառը (տես մեթոդացակում—ըսոցիալիստական արդյունարերության

տնտեսավարների կոնֆերենցիայի արդյունքները)։ Ուրեմն՝ մշակման պլանն այսպես է լինելու։

ա) Արդֆինպլանի կատարման համար անհրաժեշտ յերկու հիմնական պայման. որյեկտիվ հնարավորությունների գոյություն՝ մի կողմից և մեր ձեռնարկությունները զեկավարելու ցանկություն և ընդունակություն՝ մյուս կողմից։

բ) Առաջին պայմանը մենք ունենք։

3) Պետք է յերկրորդ պայմանը նվաճել։ «Ենթակա սպետք և մասնագետ, գործի տեր դառնանք, յերեսներս զեպի տեխնիկական գիտելիքները պետք դարձնենք» (Ստալին, «տնտեսավարների խնդիրների մասին»)։

Այնուհետև պետք է կանգ առնել տեխնիկայի համար պայքարելու նոր ձևերի վրա, վորոնք ներկայումս մասսաներն իրենք են առաջադրում — Ստալինի անվան տեխնիկայի բրիգադներ, ՃՏԱ շեֆություն՝ տեխնիկան ուսումասիրող բանվորների խմբակների վրա, տեխնիկայի ներմուծում մասսայական լրսավորության և կուսլրսավորության ցանցի մեջ, գասլնթացների նոր ցանց, տեխնիկական հեռակա կրթության զարգացում և այլն։

Առանձնապես պետք է կանգ առնել բանվորական կրթության միասնական սիստեմի վերաբեր-

մամբ ՌՍՖՀ ժողկոմիորհի կայացրած վորոշման վրա (տես «Խղվեստիա», 10 մայիսի 1931 թ.)։ Այս սիստեմի զանազան ողակները (նախապատրաստական դասընթացներ, արտադրական ու պոլիտեխնիկական դասընթացներ, բանվորական տեխնիկական դպրոց, տեխնիկում և ԲՏՈՒՀ) պետք է ապահովեն ամենաբարձրագան վորակի ու պատրաստության տեր բանվորների ընդուրկումը։ Տնայնագործականության և խառնիճազանության վերացումը, վոր բանվորական կրթության ասպարիզում մինչև որս ել գոյություն ունեն և բանվորների ընդհանուր տեխնիկական կրթության՝ առավել չափով՝ կարճ ժամանակում գործնականորեն իրականացումը, հսկայական և ֆեկտ պետք ե տան «յերեսներս զեպի տեխնիկա» լրզունուց կենսագործելու ասպարիզում։

### 5. ԿՈՒՆՑՈՒՐԱԿԱՆ ՃԱԿԱԾԻ ԳԼԽԱՎՈՐ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՆԵՔԸ

Ունկնդիրներին պետք է ծանոթացնել կուլտուրական ճակատի գլխավոր բնագավառներում (պայքար կադրերի համար, ընդհանուր ուսուցում, անգրագիտության վերացում) կուսակցության ձեռք բերած նվաճումներին ու հետազա անելքներին։ Իհարկե՝ սկզբից պետք է հիմնավո-

բել, թե ինչո՞ւ այս բնագավառները դպրավոր և հիմնական են հանդիսանում:

Ինչ վերաբերում ե կաղըրերի պրոբլեմին, ունեցնդիրներին պետք ե հիշեցնել տվյալ հարցի առթիվ հուլիսյան և նոյեմբերյան (1928 թ.) պլենումների կայացրած վորոշումները։ Հուլիսյան պլենումը կաղըրեր պատրաստելու գործն անմիջականորեն կապում ե «մեր արտադրության մեջ վոչ միայն մեր, այլև արտասահմանյան գիտության և տեխնիկայի բարձրագույն նվաճումներն ըստ ամենայնի արժատացնելու» անհրաժշտության հետ (պլենումի բանաձեւեր):

Շեշտելով, մի կողմից՝ տեխնիկական մասնագետների պահանջ ունենալու և նոր կաղըրեր պատրաստելու գործի վիճակի միջև յեղած անհամապատասխանությունը, իսկ մյուս կողմից՝ հին մասնագետների մեջ «սոցիալիստական ինդուստրացման սարուտածի ու վնասարարության անմիջական հաղորդիչների» գոյությունը՝ հուլիսյան պլենումը կաղըրերի համար մղվող պայքարը համարում ե «վողջ կուսակցության կարելուրացույն ինդիրներին»։ Կե-ի նոյեմբերյան պլենումը շեշտում ե, վոր «մասնագետների պահանջի, և նրանց տեմպերի այժմյան զարգացման միջև մենք կանգնած ենք «մկրատից ահազին բացվացքի ա-

ռաջ»։ «Այս առաված ե պլենումի վորոշումների մեջ, արդեւք կարող ե դառնալ սոցիալիստական անտեսության հետագա հաջող զարգացման գործին»։

Ընդհանուր ուսուցման մասին ընկ Ստալինը XVI համագումարում խոսում եր վորպես «կուլտուրական հեղափոխության վճռական քայլի» մասին։ XVI համագումարն իր վորոշումներով գտնում ե, վոր «ընդհանուր ուսուցման կիրառումը ու անդրադիտության վերացումը վողջ կուսակցության մարտական ինդիրը պետք ե զառնան (բանաձեւ՝ կե-ի գեկուցման առթիվ)։

Կուլտուրական շննդիրական հարվածային բնագավառության կապակցությամբ հարցարության հարկավոր և ունկնդիրների ուշադրությունը հՀՀ բավկայել նաև նախադպրոցական դաստիարակության գործի վրա, վոր կանանց արտադրական կյանքին մասնակից դարձնելու հետևաքով առողջապահությունը և ստանում։

Պարզելով կուլտուրական ճակատի կենտրոնական բնագավառները՝ պրոպագանդիստն ունկնդիրներին պետք ե ծանոթացնի այն արդյունքներին, վոր թե ամբողջ ԽՍՀՄ-ում և թե Մոսկվայի մարզում կուսակցությունն ե ձեռք բերել այս բնագավառներից ամեն մեկում։ Ինչ վերա-

բերում և Մոսկվայի մարզի տվյալներին, ապա  
այն պետք է քաղել խորհուրդների Մոսկվայի  
մարզի 2-րդ համագումարի նյութերից (գեկու-  
ցում ընդհանուր ուսուցման և անդրադիտության  
վերացման մասին և համագումարի բանաձեվը)։  
Պետք է մշակել նաև տվյալ շրջանի կուլտուրական  
շինարարության արդյունքները՝ ոգտագործելով  
տեղական նյութերը և ամենից առաջ, խորհուրդ-  
ների շրջանային անցյալ համագումարների նյու-  
թերը։

Ստորև բերում ենք վորոշ տեղեկատու նյու-  
թեր ԽՍՀՄ-ից և Մոսկվայի մարզերից։ Պրոպա-  
գանդիստների և ունկնդիրների իրենց ձեռք բերած  
այս մյուս նյութերի հիմամբ, մանրամասն  
պետք է կանգ առնել կուլտուրական շինարարու-  
թյան հետագա խնդիրների վրա՝ յելակետ ունե-  
նալով խորհուրդների Մոսկվայի մարզի 2-րդ հա-  
մագումարի բանաձեւը, ընկ. Լյուբիմովի գեկուց-  
ման առթիվ։

Պայքար հանուն կադրերի

Վերջին յերեք տարվա ընթացքում, յերբ  
հախտի գործի առնչությամբ կուսակցությունը  
տեխնիկական կադրեր պատրաստելու ահազին  
աշխատանք ծավալեց, մենք այս գործում իուզոր

նվաճում ունեցանք։ ԲՏՌԽՀ-ների և տեխնիկում-  
ների շրջանավարտներն այժմ մի քանի անգամ  
գերազանցում են այն, ինչ մենք ունեցել ենք ըն-  
դամենը յերկու տարի առաջ։ Արդյունաբերու-  
թյան բնագավառում զգալի չափով ավելացել են  
ճարտարագիտական տեխնիկական անձնակազմի  
կադրերը, գլխավորապես իհաշիվ յերիտասար-  
դության։ Արդյունաբերության բնագավառում  
մենք այս տարի համեմատաբար ավելի (100 աշ-  
խատող) ճարտարագիտական տեխնիկական կադր  
կունենանք, քան 1927 թվին։ Արդյունաբերական  
գիտական աշխատողները միայն անցյալ տարվա  
մեջ 110% աճել են, իսկ գիտահետազոտական  
մարմինների աշխատակիցների ընդհանուր թիվն  
աճել է 106%։ Պետք է հետագայում ևս այս աշ-  
խատանքը յեռանդուն կերպով ծավալել (Մոլո-  
տով, գեկուցում Խորհուրդների Համամիութենա-  
կան VII համագումարին)։

Ընդհանուր ուսման և պոլիտեխնիզացիայի մասին  
լեզուանուր ուսման և պոլիտեխնիզացիայի մասին

Տարրական դպրոցներում սովորողների թիվը  
հասցված և մինչև 14 միլիոնի։ 1930 թվի յերկ-  
րորդ կիսամյակի ընթացքում տարրական դպրոց-  
ները մինչև 60 հազար նոր ուսուցիչ և ուղարկվել։  
Արդյունաբերական շրջաններում ու բանվորական  
վայրերում իրականանում ե այն, վոր ընդհանուր

ուսուցումը վիաստորեն մոխվում և յոթնամյա ուսուցման:

Գիտենք, վոր շարական Ռուսաստանի տարրական ուսուցման ամենաարագ զարգացումը տեղի յեռ ունեցել 1905-1914 թվականներին: Այդ ժամանակամիջոցում (9 տարի) տարրական դպրոցներում սովորողների թիվը 4.479.741-ից մինչև 6.535.955-ի հասավ, կամ 40% աճեց: Խոկ Խորչորդային յերկիրն 8 տարվա ընթացքում — 1923-ից մինչև 1931 թիվը — կարողացավ տարրական դպրոցում սովորողների թիվը 6.721.567-ից ավելացնել մինչև 14.380 հազարի կամ ավելի քան յերկու անգամ:

Դպրոցի պոլիտեխնիկացումն իրականացվում է. ա) դպրոցները գործարաններին, ՄՏԿ, խորհունտեսություններին ու կոլտնտեսություններին կցելու միջոցով. բ) աշակերտների արտադրական աշխատանքը կազմակերպելու միջոցով, վոր (աշխատանքը) սերտ կերպով կապված ե թեորետիկ ուսուցման հետ և գ) ամբողջ սովորող մասսան սոցիալիստական շինարարության գործին ակտիվ կերպով մասնակից դարձնելու միջոցով:

Ընդհանուր ուսուցման և պոլիտեխնիկացման բնագավառների հետագա բոլոր խնդիրները նշված են Համե (բ) կեց 1931 թ. փետրվարի 21-ի վարչ-

ման և Խորհուրդների Համառուսական Համադաւարի վորոշումների մեջ:

Ընդհանուր ուսուցման գործը Մոսկվայի մարզում հետեւյալ արդյունքն ե տվել: 8-11 տարրականի դպրոց մտնելու խնդիրը հիմնականում բեկանի դպրոց յարդիկ մտնելու մտնելու առջեւածքը 1.062 հազար յերեխա: Մոսկվայում և 99 քաղաքային ու արդյունաբերական կետերում բաղադրային պարտադիր ուսուցում և մտցված: Պարտադիր ուսուցմն ընդդրկել ե 44 հազար 11-15 տգեռահաս: 1930 թ. 430 նոր շենք և կառուցվել: Տարրական դպրոցին արվող հատկացումները 1930 թվի 32 միլիոնից 1931 թվին 46 միլիոնուր յեն հասել: Մոսկվայի մարզային II համագումարի վորոշման համաձայն, 1931 թվին 29 շրջանում (Մոսկվամերձ ավազանի և ՄՏԿ շրջաններ) յոթնամյա ընդհանուր լրացուցիչ ուսուցում պետք է մտցվի:

Անգրագիտության վերացումը

«ԽՍՖԵՀ» ժողկոմիորհը յելակետ ունենալով անդրադիտությունը յերեք տարում վերացնելլ՝ 1929/30 թվի գործառնական տարվա համար հասանել և 4 միլիոն մարդու անդրադիտություն վերացնելու պլան: Տեղական կազմակերպու-

թյուններն այս պլանը ժոտավորապես մինչև 10 միլիոն ավելացրել են, և աշխատանքն ակսել և ծավալվել սոցմբցման ու կուլտարշավի մեթոդների լայն կիրառումով։ Մինչդեռ 1927/28 թվին մենք 800 հազար անդրագետ ենք սովորեցրել, իսկ 1928/29 թվին՝ 2 միլիոն — 1929/30 թվին կառվորեցնենք 10,5 միլիոն անդրագետ (Կագանովիչ, դեկուցում XVI համադումարին)։ 1931 թվին նախատեսվում է ուսուցման ցանցի մեջ ընդգրրի կել 17,5 միլիոն անդրագետ։

Մոսկվայի մարզում կուլտարշավի հետեւանքով գրագիտության ուսուցումն ընդգրկել է մոտ 600 հազար հոգի; Սակայն այս արդյունքը միանգամայն անբավարար է, և Խորհուրդների Մոսկովյան II համագումարն անդրագիտության վերացման աշխատանքի վիճակը դատավ անբավարար։ Հենց այս համագումարն ել խնդիր առաջադրեց, վոր ամբողջ մեծահասակ բնակչության (քաղաքում, և ձեռնարկություններում մինչև 50 տարեկան, իսկ դյուզում՝ մինչև 40 տարեկան) անդրագիտության վերացումն ավարտվի 1931 թվին, իսկ կիսադրագիտության վերացումը՝ 1932 թվի ընթացքում։ Ուստի և միկայանները պետք է վերածվեն՝ մեծահասակների տարրական և ավելի յերկարաժե դպրոցների և այլն և այլն։

6. ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ԿՈՒՂՏՈՒՐԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ ԶՈՐԱԿՈՉԵԼՈՒ ՀՈՒ ԶԵՎԵՐԸ

Այս գլուխը պետք է նվիրվի կուլտուրական աշխատանքի այն նոր ձևերի ու մեթոդների պարզաբանմանը, վոր կուլտուրայի համար մղած պայքարում մասսաները հենց իրենք են ստեղծել։ Այս ձեվերից հիմնականն ու գլխավորը կուլտարշավն ու կուլտևստափետն են։

Կուլտարշավը մասսաների շարժումն ե՝ կուլտուրական ճակատի վորոշ բնագավառներին տիրապետելու համար։ Այս շարքն են դասվում անգրագիտության վերացման և ընդհանուր ուսուցման արշավը, գրադարաններին արշավը, նախադպրոցական արշավը և այլն։ Մեղնում մեծ տարածում գտած արշավները կուլտուրայի համար մղլող պայքարին բանվորներից, գյուղացիներից ու ինտելիգենտներից հարյուր հազարավոր կուլտբանակային են մասնակից դարձել։ Կուլտբանակայինն ագիտատոր ե, կազմակերպիչ, իսկ մի շարքերում՝ կուլտուրական աշխատանքի անմիջական ղեկավարը։ Կուլտարշավի պայմաններում կուլտաշխատանքը դադարում է գերատեսչական կուլտարշավատե դադարում և մասնակի իրենց գործ լինելուց և դառնում և մասսաների իրենց

իսկ գործը, վորոնք կոտրում են դասակարգային թշնամու գիմազրությունը և կուլտուրական շինարարության ասպարիզում հսկայական տեմպեր են ձեռք բերում:

Կուլտեստաֆետը կուլտուրական ճակատի սոցմրցման ե'լ ավելի բարձր ձեռնրից մեկն ե: Կուլտեստրաֆետի առանձնահատկություններն են. ա) այն կատարվում է լայն ճակատով, ընդդրկելով վոչ թե կուլտուրական շինարարության առանձին բնագավառներ (ինչպես կուլտարշավի բնագավառում այդ տեղի ունի), այլ՝ վճռական ողակներ. բ) այն կատարվում է կոնկրետ առաջադրությունների (մարշրուտների) սկզբունքով. դ) կուլտեստաֆետի հենակետերն են՝ ձեռնարկությունները, կուլտնտեսություններն ու խորհունտեսությունները, վորոնք իրար հետ սոցմըսցման մեջ են մտնում: Կուլտարանակայինների հիմնական մասնան բանվորները, կուլտնտեսականները, չքավորներն ու միջակներն են. դ) կուլտեստաֆետն անմիջականորեն կապվում է արդֆինպլանի ու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մզկող պայքարի հետ:

Կուլտշինարարության ասպարիզում ժամանակակցությունն աճելու ընթացքում կուլտարշավին ու կուլտեստաֆետը տհան (լու-

գում) են կուլտուրական հեղափոխության խնդիրները հարվածայնորեն իրականացնելու մի շաբաթ նոր ձեռնրով ու մեթոդներով: Ձեռնարկություններում առաջ են դալիս կուլտպատեր: Կուլտպրոցն ե'լ ավելի մեծ տարածում է գտնում, վորպես կուլտաշխատանքի արագ վերակառուցման ու ձեղքվածքների վերացման մեթոդ: Կուլտուրական շինարարության պրակտիկայի ասպարեզ ե քաշված «հասարակական բռւքսիրը» և այլն:

## 7. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈԼԵՏՊԼԱՆ

Թեմայի վերջին մասում ունկնդիրներին պետք է առաջադրել միասնական կուլտպլանի պլրոբլեմը: Միասնական կուլտպլանի նպատակը զանազան կազմակերպությունների (Լուսբաժին, արհմիություն, ԿեթՄ, կամավոր ընկերություն, կոռոպերացիա) վարած կուլտ աշխատանքի միացնելն ու կանոնավոր ծրագրումն ե: Միասնական պլանի մշակման և իրականացման դործը ղեկավարում են կուլտուրական խորհուրդները, վարոնք վեր են ածվում կուլտուրական հետքափոխության շատրների: Միասնական կուլտպլանին պետք է ունենա ամեն մի գործառնություն առաջնային դրագություն ու առաջնային դրագություն:

րան, կուլտնտեսություն, խորհութեսություն, գյուղ, շրջան և վերջապես՝ ամեն մի մարդ։ Հենց այս պլանն ել կուլտուրական ճակատում պրոլետարիատի ծավալուն հարձակում գործելու ստրատեգիական պլանն է։ Միասնական կուլտուրական համար մզլող պայքարում և կուլտուրական ճակատի հիմնական խնդիրների շուրջը մասսաների հետազա մորիլիզացիայի գործում լուրջ քայլ պիտի հանդիսանա հարվածային միամսյակը (մայիսի 20-ից մինչև հունիսի 20-ը), վորանց և կացվում Լեպսեյի անվան գործարանի բանվորների նախաճեռնությամբ։ Միամսյակի նպատակն ե՝ ստուգել 1931 թ. կուլտուրական իրացման ընթացքը և ապահովել այդ պլանի հարյուր տակոսյա կատարմանը։ Մի ամսվա ընթացքում պետք է աշխատել կուլտուրանը հասցնել ամեն մի կուլտուրանակայինի, մեծապես բարձրացնել կուլտխորհուրդների ակտիվությունը, անմիջապես վերացնել գոյություն ունեցող ճեղքվածքները, լուսավորության ամբողջ աշխատանքն ամարային ձեերի փոխադրել, լուսավորության ապարատի յերևն ամենավճռական կերպով դարձնել դեպի արտադրություն, դեպի հանուն արդինալանների ժղվող պայքարը, դեպի գյուղա-

աբնտեսական կամպանիայի խնդիրները, դեպի նոր կառուցումները և այլն։ Ամբողջ մշակման ավարտումն ու գործնական արդյունքը պետք է լինի կուլտուրավորության ապարատը հարվածային միամսյակ անցկացնելու գործին մասնակից գարձելը։ Ուստի յուրաքանչյուր պարզում ամենից առաջ պետք ե քննության առնել և պարզել տվյալ ձեռնարկության, խորհութեանուրյան ու կուլտնեսության կուլտուր-լուսավորական աշխատանքի վիճակը, ստուգել, թե արդյոք միասնական կուլտպահ գոյություն ունի<sup>6</sup>, կուլտխորհուրդ կազմակերպված ե արդյոք, ի՞նչ կոնկրետ արդյունքներ են ունեցել լուսավորության տեղական կազմակերպությունների ու հիմնարկների կիսամյա բոլոր աշխատանքները։ Հենց տեղն ու տեղը, պարապմունքների ժամանակ պետք է մշակել միամսյակի ծրագիր և ստուգել, թե ինչ չափով և այն համապատասխանում կուլտուրական ճակատի նկատմամբ կուսակցության առաջադրած հիմնական խնդիրներին և այլն։ Յեվ, վերջապես՝ խմբակն ակտիվ կերպով պետք է մասնակից միամսյակն անցկացնելու ծավալման գործին, կուլտուրանակի ամբողջ աշխատանքը նոր աստիճանի վրա զնելու հաղորդիչը հանդիսանա, աշխուժացնի կուլտարշամբ ու

կուլտուրավիետը, առաջ տանի ընդհանուր աեթոնիկական ուսուցման իրականացումը, աշխատի, վորդործաբանում կամ գյուղատնտեսության մեջ պոլիտեխնիկական դպրոցի յերեխաների պարագամունքները կանոնավորվեն, միամսյակի նշանակության մասին մի շարք զեկուցումներ կարդապահավորի աշխատիկ աշխատանքի այն խնդիրներն ու ձևերը, վորոնք կարող են հանձնարարվել՝ տեսական ուսուցումը մեր շինարարության հետ կապելու նըստակով։

Ունկնդիրների կողմից հարվածային միամսյակին մասնակցելն սկիզբ պետք է հանդիսանանաց հետագա սիստեմատիկ մասնակցությանը կուլտուրական շինարարության գործին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

1. XVI կուսհամագումարի արդյունքները (Համկ(բ)կ. կկ-ի կուլտուրապի ժողովածու, Ռուսականաց, 1930 թ. եջ 100-110: Գլուխ «XVI համագումարն ու կուլտուրական հեղափոխության պրոբլեմները»)։

2. Համկ(բ)կ. կկ հուլիսյան պլենումի բանաձևերը, Ռուսականաց, 1928 թ., եջ 19-29: Բանաձեւվ՝ ընկ Մալատավի զեկուցման առթիվ, «Տեխնիկական կաղըերի պատրաստման բարեգործման ժամանելիք»։

3. Համկ(բ)կ. կկ նոյեմբերյան պլենումի արդյունքները: Գրադարան Համկ(բ)կ. կկ. Առողջապահության պարտադիր կազմի կազմության 1929 թ.: Գլուխ «տեխնիկական կաղըերի պատրաստումը», եջ 102-115 և բանաձեւ հուլիսյան (1928 թ.) պլենումի վորոշումների կատարումը՝ տեխնիկական կաղըեր պատրաստելու մասին» եջ 164-175: 4. Ի. Ստալին» «Տնտեսավարների անվիճակը», Միացյալ Պետքրատ «Մոսկովսկի Ռաբության» 1931 թ.։

5. Համկ(բ)կ. կկ գիետրվարի 21-ի վորոշումը «Ընդհանուր տարրական ուսուցման մասին («Պրավդա», 3 մարտի 1931 թ.)».

6. Խորհուրդների համառուսական XV համագումարի վորոշումը «մասսայական գպրոցի ընդհանուր ուսուցման ու պոլիտեխնիկացման մասին» («Իզվեստիա», 6 մարտի 1931 թ.)։

7. Համամիութենական 2-րդ կուսխորհը կաղըերության բանաձեւերը՝ ժողովրդական լուսավորության հարցերի առթիվ, Ռուսականաց, 1930 թ., եջ 3-35։

8. Պոլիտեխնիկական կրթության I համագումարը: Ռուսականաց, 1930 թ.։

Հումկեր, 1930թ., Կշ 3-30 և 82-88, Հրատարակ.

2-րդ :

9. К итогам II Московского областного съезда советов РК и КДИ, изд. мособлисполкома, 1931 г. стр 99—108.

10 Լեպսի անվան գործարանի բանվորների դիմումը — «Известия» 11/V 1931թ.:

11. Դեպի ընդհանուր տեխնիկական ուսուցուած — «Պրավդա»-յի «առաջնորդող» ,

ԹԱԳ 15 ԿՐՊ. (1 Ա.)



ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ  
КУЛЬТУРНОГО СТРОИТЕЛЬСТВА

Госиздат ССР Армении  
Эривань — 1931

«Ազգային գրադարան



NL0225485

44.776